Անկախ աուդիտորական եզրակացություն

«ՍԱԼՍԱ ԴԻՎԵԼՈՓՄԵՆԹ» ՓԲԸ բաժնետերերին

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՍԱԼՍԱ ԴԻՎԵԼՈՓՄԵՆԹ» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են առ 31 դեկտեմբերի 2013թ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ պատասխանատվությունը ներառում է այնպիսի ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդրում և կիրառում, որը ղեկավարությունն անհրաժեշտ կհամարի էական խեղաթյուրումներից (թե սխալի, թե խարդախության արդյունքում առաջացող) զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, ինչպես նաև տեղին հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն և կիրառում, ողջամիտ հաշվապահական գնահատականների կատարում:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք աուդիտորական եզրակացությանը կից ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք աուդիտորի վարքագծի կանոններին և աուդիտը պլանավորենք և իրականացնենք այնպես, որ ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Կիրառված ընթացակարգերի ընտրությունը կախված է աուդիտորի դատողությունից, ինչը ներառում է նաև ֆինանսական հաշվետվություններում այնպիսի էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը, որոնք կարող են պայմանավորված լինել թե խարդախությամբ, և թե սխալներով: Այդ ռիսկերի գնահատումներն իրականացնելիս աուդիտորը հաշվի է առնում ներքին վերահսկողության համակարգը, որքանով այն տեղին է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, որպեսզի նախատեսի աուդիտորական այնպիսի ընթացակարգեր, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում, բայց ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը նաև ներառում է կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելու և ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորության գնահատում, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատում:

Մենք գտնում ենք, որ մեր ձեռք բերած աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար:

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «ՍԱԼՍԱ ԴԻՎԵԼՈՓՄԵՆԹ» ՓԲԸ-ի առ 31 դեկտեմբերի 2013թ. ֆինանսական վիճակը և այդ ամսաթվին ավարտվող տարվա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

Արթուր Հարությունյան

Տնօրեն

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ

Երևան

04 ապրիլի 2014թ.

Անուշ Գրիգորյան

Աուդիտի մենեջեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծան.	31.12.2013թ.	31.12.2012թ.
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	6	266	-
Երկարաժամկետ բանկային ավանդներ	7	1,636,713	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**1,636,979**	**-**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	8	3,249,038	-
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր		68	-
Տրված ընթացիկ կանխավճարներ	9	2,239,771	491,798
Դրամական միջոցներ	10	299,021	10,409,056
Կարճաժամկետ բանկային ավանդներ	7	4,229,492	-
Այլ ընթացիկ ակտիվներ	11	409,027	-
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**10,426,417**	**10,900,854**
Ընդամենը ակտիվներ		**12,063,396**	**10,900,854**
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կանոնադրական կապիտալ	12	10,902,767	500,001
Կուտակված վնաս (շահույթ)		364,701	(1,961)
Սեփական կապիտալի այլ տարրեր		-	10,402,766
Ընդամենը սեփական կապիտալ		**11,267,468**	**10,900,806**
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր		72	48
Պարտավորություններ շահութահարկի գծով		78,385	-
Ընթացիկ պահուստներ	13	717,471	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**795,928**	**48**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**12,063,396**	**10,900,854**

Տնօրեն

Արմեն Գյուլխասյան

04 ապրիլի 2014թ.

Գլխավոր հաշվապահ

Արմեն Կակոսյան

«ՍԱԼՍԱ ԴԻՎԵԼՈՓՄԵՆԹ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA YEREVAN CLOSED JOINT STOCK COMPANY
"SALSA DEVELOPMENT"
02610952

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծան.	2013թ.	2012թ.
Հասույթ		-	-
Վաճառքի ինքնարժեք		-	-
Համախառն շահույթ		-	-
Վարչական ծախսեր	14	(41,260)	(1,983)
Այլ գործառնական եկամուտ		2,401	22
Տոկոսային եկամուտներ	15	430,033	-
Տոկոսային ծախսեր	15	(86,432)	-
Փոխարժեքային տարբերությունից օգուտ		140,305	-
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		**445,047**	**(1,961)**
Շահութահարկի գծով ծախս	17	(78,385)	-
Շահույթ (վնաս) հարկումից հետո		**366,662**	**(1,961)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		**366,662**	**(1,961)**

Տնօրեն

Արմեն Գյոլխասյան

Գլխավոր հաշվապահ

Արմեն Կակոսյան

04 ապրիլի 2014թ.

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Սեփական կապիտալի այլ տարրեր	Կուտակված շահույթ	Ընդամենը
Մնացորդն առ 01 դեկտեմբերի 2012թ.	-	-	-	-
Թողարկված բաժնետոմսեր	500,001	-	-	500,001
Սեփական կապիտալի այլ տարրեր	-	10,402,766	-	10,402,766
Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)	-	-	(1,961)	(1,961)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2012թ.	**500,001**	**10,402,766**	**(1,961)**	**10,900,806**
Թողարկված բաժնետոմսեր	10,402,766	-	-	10,402,766
Սեփական կապիտալի այլ տարրեր	-	(10,402,766)	-	(10,402,766)
Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)	-	-	366,662	366,662
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2013թ.	**10,902,767**	**-**	**364,701**	**11,267,468**

Տնօրեն

Արմեն Գյուլխասյան

04 ապրիլի 2014թ.

Գլխավոր հաշվապահ

Արմեն Կակոսյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	**2013թ.**	**2012թ.**
Գործառնական գործունեությունից հոսքեր		
Այլ մուտքեր	2,452	22
Աշխատանքների, ծառայությունների ձեռքբերումից (ներառյալ տրված կանխավճարները)	(4,775,810)	(491,798)
Նյութերի, ապրանքների ձեռքբերումից	(628)	-
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(2,198)	(101)
Վճարումներ պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	(30)	(30)
Բանկային ծառայությունների (արտարժույթի փոխանակում) գծով	(36,327)	(1,804)
Այլ ելքեր	(1,020)	-
Ընդամենը գործառնական գործունեությունից զուտ հոսքեր	**(4,813,561)**	**(493,711)**
Ներդրումային գործունեությունից հոսքեր		
Բանկային ավանդների փակում	11,776,614	-
Բանկային ավանդների դիմաց ստացված տոկոսներ	134,423	-
Հիմնական միջոցների ձեռքբերումից	(606)	-
Ներդրում բանկային ավանդներում	(17,464,291)	-
Ընդամենը ներդրումային գործունեությունից զուտ հոսքեր	**(5,553,860)**	**-**
Ֆինանսական գործունեությունից հոսքեր		
Բաժնետոմսերի տեղաբաշխումից մուտքեր	-	500,001
Հիմնադրի կողմից կանոնադրական կապիտալի վճարումներ մինչև կանոնադրական կապիտալի փոփոխության պետական գրանցումը	-	10,402,766
Ընդամենը ֆինանսական գործունեությունից զուտ հոսքեր	**-**	**10,902,767**
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**(10,367,421)**	**10,409,056**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	257,386	-
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի	**10,409,056**	**-**
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	**299,021**	**10,409,056**

Տնօրեն

Արմեն Գյուլխասյան

Գլխավոր հաշվապահ

Արմեն Կակոսյան

04 ապրիլի 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA YEREVAN CLOSED JOINT STOCK COMPANY
«ՍԱԼՍԱ ԴԻՎԵԼՈՓՄԵՆԹ»
"SALSA DEVELOPMENT"
02610952